ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/14097-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1015-26.02.2025-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը՝

1. Նախագծի 1-ին հոդվածի և 9-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 129.3-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ հարկ է նկատել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի մարտի 26-ի ՀՕ-75-Ն օրենքով արդեն իսկ նախատեսվել են Օրենսգրքի 25.1-ին հոդվածի 6-րդ և 129.3-րդ հոդվածի 1-ին մասերում համապատասխանաբար տուգանային միավորների և վարելու իրավունք ունեցող անձանց հատկացվող միավորների վերաբերյալ իրավակարգավորումներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծից հանել 1-ին հոդվածը, վերնագիրը համապատասխանեցնել նախագծի բովանդակությանը և վերանայել նախագծի հոդվածների համարակալումը, իսկ 9-րդ հոդվածով (լրամշակված

տարբերակում՝ 8-րդ հոդված) նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 129.3-րդ հոդվածի 1-ին մասում «9» թիվը փոխարինել «13» թվով:

2. Հաշվի առնելով Նախագծի 12-14-րդ (լրամշակված տարբերակում՝ 11-13-րդ) հոդվածների կարգավորումները, որոնցով նախատեսվում են մի շարք իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ենթակայության փոփոխություններ՝ առաջարկում ենք Նախագծի 16-րդ (լրամշակված տարբերակում՝ 15-րդ) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 15.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:
2. Սույն օրենքի 11-13-րդ հոդվածների գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագող հարաբերությունների վրա:»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ